ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԾՐԱԳՐԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՆՈՐ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԱՆ ՄՇԱԿՈՒՄԸ

ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ Ա. Մ.

ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածը հռչակում է, որ Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետություն է: Երկրի հիմնական օրենքով հռչակված իրավական պետության կառուցումն անքակտելիորեն կապված է հանրապետությունում օրինականության հաստատման և իրավակարգի ամրապնդման, հանցավորության կանխարգելման և դրա դեմ արդյունավետ, գիտականորեն հիմնավորված ու տեսականորեն ընդհանրացված պայքարի իրականացման հետ:

Հանցավորության դեմ պայքարի կազմակերպումը կարևոր համապետական խնդիր է: Հակազդել հանցավորությանը ի վիճակի է միայն ուժեղ պետությունը[1], որն ունի գիտականորեն մշակված պետաիրավական ռազմավարություն և հստակ գիտակցում է այդ խնդրում իր պարտքն ու պատասխանատվությունը հասարակության առջև: Այս առումով պետության հատուկ դերը պայմանավորված է նրա սոցիալական բնույթով և նշանակմամբ: Որպես հասարակության քաղաքական կազմակերպություն՝ այն օժտված է համապատասխան իշխանական լիազորություններով, իր տրամադրության տակ ունի հանցավորությանը հակազդելու և դրա դեմ պայքարի սոցիալական, դաստիարակչական, հարկադրանքի և այլ միջոցներ և քաղաքացիների առջև պատասխանատվություն է կրում հակաօրինական ոտնձգություններից նրանց հուսալի պաշտպանությունն ապահովելու հարցում:

Համակարգային բարեփոխումների ներկա շրջանում «հանցավորության դեմ պայքարի կազմակերպմանն առնչվող խնդիրները բարդ են և պատասխանատու»[2]: Կասկածից վեր է, որ հանցավորությունը հասարակության արգասիքն է, նրա կյանքում օբյեկտիվորեն գոյություն ունեցող հակասությունների հետևանքը: Հանցավորության ցածր մակարդակը երբեք էլ չի եղել իրավական համակարգի արժանիքը[3]: Այս առումով իրատեսական չէ, ինչպես դա արվում էր ոչ հեռու անցյալում, խնդիր դնել լիովին հաղթահարելու հանցավորությունը, վերջնականապես արմատախիլ անելու հանցավոր իրավախախտումների պատճառներն ու դրանց կատարմանը նպաստող պայմանները: Որքան էլ կատարյալ

---

[1] *Տե՛ս* **Голощанов А. М.** *Конституционные основы становления государственно-правовой стратегии РФ (Государство и право, 2005, N 11, с. 95-100); Основы государственной политики борьбы с преступностью в России. Теоретическая модель, М., 1997, с. 35.*

[2] *ՀՀ Նախագահի ելույթը դատախազության աշխատողի օրվան և Հայաստանի դատախազության հիմնադրման 85-ամյակին նվիրված հանդիսավոր երեկոյում, 1 հուլիսի 2003 թ. (տե՛ս Օրինականություն, 2003, N 23, էջ 10):*

[3] *Տե՛ս* **Кудрявцев В. Н.** *Стратегии борьбы с преступностью, М., 2003, с. 278.*

լինեն հասարակությունն ու պետությունը, նրանք պարտավոր են հաշտվել հանցավորության՝ որպես անխուսափելի սոցիալական չարիքի գոյության հետ: Սակայն նրանք ի զորու են դիմակայել դրա զարգացման վտանգավոր և անցանկալի միտումներին, չեզոքացնել հանցավոր իրավախախտումների պատճառները, քաղաքացիներին պաշտպանել հանցավոր ոտնձգություններից, վերականգնել սոցիալական արդարությունը, պատժել մեղավորներին և ապահովել հանցագործությամբ պատճառված վնասի հատուցումը:

Հայաստանի Հանրապետությունը, ինչպես և հետխորհրդային բոլոր հանրապետությունները, հետևողական քայլեր են ձեռնարկում իրավական պետության կառուցման ուղղությամբ: Ակնհայտ է, սակայն, որ դեռևս վաղ է խոսել մեր հասարակության կյանքում, հասարակական հարաբերությունների բոլոր ոլորտներում օրենքի իշխանության և գերակայության հաստատման մասին: Արվել են իրավական պետության կառուցմանը միտված առաջին քայլերը միայն. դեռևս պետք է հետևողական ու նպատակասլաց ջանքեր գործադրվեն օրենքի իրական գերիշխանության հաստատման համար, որոնք ընդգրկելու են պետական շինարարության, տնտեսության, սոցիալական ոլորտի, արդարադատության և հանցավորության դեմ պայքարի, այլ խոսքով՝ հասարակության կեցության գործնականում բոլոր կողմերը[4]: Այս համատեքստում հատուկ կարևորություն է ստանում օրինականության հանցավոր խախտումների դեմ պայքարի ակտիվացումը, դրանում իրավապահ մարմինների ջանքերի համախմբումը և համագործակցության ապահովումը[5], իրավապահ գործունեության տեսական, գիտական և գործնական հիմքերի հետագա կատարելագործումը:

Այս անվիճելի դատողությունների լույսի ներքո պարտավոր ենք արձանագրել, որ ՀՀ-ում մինչև օրս մշակված չէ հանցավորության դեմ պայքարի ռազմավարություն, այդ պայքարի պետական քաղաքականության հայեցակարգ[6]: Այդ պայքարը միայն

---

[4] *Տե՛ս Состояние законности в Российской Федерации (2000-2001 годы). Аналитический доклад. Под ред. А. И. Алексеева, М., 2002, с. 6.*

[5] *Տե՛ս* **Капитонова Ю. В.** *Координация как средство повышения эффективности борьбы с преступностью [Актуальные проблемы укрепления законности и борьбы с преступностью (Материалы конференции молодых ученых, 5 июня 2001 г.), М., 2002, с. 39-42].*

[6] *Հանցավորության դեմ պայքարի պետական քաղաքականության էության, սկզբունքների, հիմնական ուղղությունների և ձևավորման հայեցակարգային հարցերի մասին մանրամասն տե՛ս* **Сухарев А. Я.** *Концептуальные вопросы формирования и сущность государственной политики борьбы с преступностью в России [Формирование государственной политики борьбы с преступностью (материалы конференции), М., 1997, с. 3-19];* **Бойков А. Д.** *Понятие и принципы государственно-правовой политики борьбы с преступностью (там же, с. 19-27);* **Долгова А. И.** *Стратегические направления борьбы с преступностью (там же, с. 27-45);* **Лопатин В. Н.** *О некоторых приоритетах научных исследований в решении проблем борьбы с*

վերջերս է դրվել ծրագրային հիմքերի վրա: Վերջիններիս անհրաժեշտությունն առավել քան ակնհայտ է. դրանք պետք է նպատակ հետապնդեն հստակեցնել հանցավորության դեմ պայքարի հիմնական ուղղությունները, այդ պայքարին հաղորդեն համակարգվածություն, ակտիվացնեն նշված ոլորտում պետության և հասարակության բոլոր առողջ ուժերի ջանքերն ու հնարավորությունները: Անհրաժեշտ է կատարելագործել հանցավորության դեմ պայքարի ներպետական օրենսդրությունը, հանցագործությունների կանխարգելման միջոցներն ու մեթոդները:

ՀՀ ոստիկանության 6-րդ տարեդարձի կապակցությամբ ՀՀ ոստիկանապետը իր ելույթում անդրադառնալով հանրապետության ոստիկանության խնդիրներն առավել արդյունավետ իրականացնելու հարցին, նշել է, որ այդ նպատակով «ոստիկանությունն արդեն իսկ սկսել է հանցավորության կանխարգելման պետական ծրագրի պատրաստման և իրականացման աշխատանքները..., որով հանցավորության դեմ պայքարը կթևակոխի ինչպես իրավապահ կառույցների, այնպես էլ պետական այլ մարմինների և հասարակության բոլոր շերտերի հետ լայն համագործակցության փուլ»[7]: Այսօր նշված ծրագիրն այլևս իրողություն է: ՀՀ կառավարության 2008 թ. մարտի 27-ի որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետությունում հանցագործությունների կանխարգելման պետական ծրագիրը, որը մշակել է ՀՀ վարչապետի 2007 թ. մայիսի 3-ի որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովը:

Ծրագրի մշակման իրավական հիմքն են կազմել ՀՀ Սահմանադրությունը, հանցավորության դեմ պայքարի հարցերի վերաբերյալ միջազգային իրավական պայմանագրերը և հանցագործությունների կանխարգելման ոլորտում ընդգրկված սուբյեկտների գործունեությունը կարգավորող ՀՀ օրենսդրությունը: Ծրագիրը մշակելիս հանգամանորեն հաշվի են առնվել հատկապես ՀՀ Նախագահի 2007 թ. փետրվարի 7-ի թիվ ՆՀ-37-Ն հրամանագրով հաստատված «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության», ՀՀ կառավարության 2007 թ. հունիսի 21-ի թիվ 695-Ա որոշմամբ հավանության արժանացած «ՀՀ կառավարութ- յան ծրագրի», ՀՀ կառավարության 2003 թ. նոյեմբերի 6-ի թիվ 1522-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրի», ինչպես նաև ԱՊՀ անդամ պետությունների ղեկավարների խորհրդի հաստատած «Հանցավորության դեմ պայքարի 2008-2010 թթ. համատեղ միջոցառումների միջպետական ծրագրի» հիմնարար դրույթները:

Նշենք, որ հանցագործությունների կանխարգելմանն ուղղված պետական ծրագրային փաստաթուղթ Հայաստանի Հանրապետությունում մշակվել և ընդունվել

преступностью [Актуальные проблемы борьбы с преступностью (материалы второй научно-практической конференции молодых ученых), М., 2003, с. 3-5].

[7] ՀՀ ոստիկանության տարեդարձը, «02» ՀՀ ոստիկանության շաբաթաթերթ, 20.IV.2007, էջ 2:

է առաջին անգամ: Մինչ այդ, ԱՊՀ ողջ տարածքում հանցավորության դեմ համատեղ պայքար վարելու ընդհանուր պահանջի գոյությամբ պայմանավորված, հանցավորության դեմ պայքարում ԱՊՀ անդամ պետությունների համագործակցության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով մշակվել և իրականացվել են 2000-2003 թթ. հանցավորության դեմ պայքարի համատեղ միջոցառումների միջպետական ծրագիրը և նույնանուն ծրագիր 2008-2010 թթ. համար[8]:

Հանրապետությունում հանցավորության կանխարգելման պետական ծրագրի մշակման անհրաժեշտությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Դրանք են՝

ա) հանցագործությունների կանխարգելման ոլորտում պետական միասնական քաղաքականության բացակայությունը, հանցագործությունների սոցիալական կանխարգելման համակարգի ցածր արդյունավետությունը, հատկապես անչափահասների, քրեակատարողական հիմնարկներից վերադարձած անձանց և այլ խոցելի խմբերում.

բ) հանցագործությունների կանխարգելման ոլորտում ընդգրկված բոլոր սուբյեկտների (պետական իշխանության մարմինների, կազմակերպությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների և ֆիզիկական անձանց) գործունեության հստակ համակարգման անհրաժեշտությունը.

գ) հանցագործությունների կանխարգելման ոլորտին առնչվող օրենսդրության բարելավման պահանջը.

դ) մի շարք հանցատեսակների (ավազակային հարձակումներ, կողոպուտներ, բնակարանային գողություններ և այլն), հասարակական վայրերում կատարվող հանցագործությունների նախականխման, ինչպես նաև որոշակի անձանց խմբերի (անչափահասներ, կրկնահանցագործներ) շրջանում իրականացվող կանխարգելիչ աշխատանքների ցածր արդյունավետությունը.

է) հանցավորության դեմ պայքարում բնակչության սոցիալական ակտիվության ցածր մակարդակը.

զ) բնակչության շրջանում իրավական քարոզչության կազմակերպման, օրինապահ քաղաքացու վարքագծի խրախուսմանն ուղղված աշխատանքների ցածր մակարդակը.

է) իրավապահ մարմինների նյութատեխնիկական թույլ ապահովվածությունը:

Հանցավորության կանխարգելման պետական ծրագրի հիմնական նպատակներ են հռչակված՝ հանցագործությունների կանխարգելման ոլորտում պետական միասնական քաղաքականության իրականացումը, սոցիալական կանխարգելման համակարգի արդյունավետության բարձրացումը, օրինականության և իրավակարգի հետագա ամրապնդումը, հանցավոր ոտնձգություններից քաղաքացիների սահ-

---

[8] *Տե՛ս http//cis.minsk.by/main.aspx*

մանադրական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը, հանցավորության դեմ պայքարի ոլորտում շահագրգիռ պետական մարմինների և հանրության ներգրավվածության ապահովումը:

Բացահայտված են նաև հանցավորության կանխարգելման պետական ծրագրի հիմնական հետևյալ խնդիրները՝

ա) հանցագործությունների կանխարգելման, դրանք ծնող պատճառների և դրանց կատարմանը նպաստող պայմանների վերացման գործում իրավապահ և շահագրգիռ պետական այլ մարմինների գործունեության համակարգումը.

բ) հանցագործությունների կանխարգելման և իրավակարգի ամրապնդման գործում պետական ինքնակառավարման մարմինների դերի բարձրացումը.

գ) հանցագործության համար պատասխանատվության և պատժի անխուսափելիության սկզբունքի անշեղ իրագործումը.

դ) հասարակական կարգի և անվտանգության ամրապնդումը.

է) հանցագործությունների նախականխման, կանխման, խափանման և բացահայտման աշխատանքներում հասարակական կազմակերպությունների և քաղաքացիների ակտիվ ներգրավվածության ապահովումը.

զ) իրավապահ գործունեության ոլորտում վարվող պետական քաղաքականության նկատմամբ հանրապետության բնակչության մեջ վստահության ձևավորումը և իրավագիտակցության բարձրացումը.

է) հանցագործությունների կանխարգելման ոլորտում ընդգրկված պետական մարմինների կադրային և նյութատեխնիկական ապահովումը:

ՀՀ-ում հանցավորության կանխարգելման պետական ծրագրով նախատեսված են հետևյալ 3 խումբ միջոցառումները՝

ա) օրենսդրության կատարելագործմանն ուղղված միջոցառումներ.

բ) կազմակերպչական գործունեության կատարելագործմանն ուղղված միջոցառումներ, այդ թվում՝

1. սոցիալական ուղղվածություն ունեցող միջոցառումներ.

2. հանցագործություններ ծնող պատճառների և դրանց կատարմանը նպաստող պայմանների ազդեցության չեզոքացմանն ուղղված միջոցառումներ.

3. իրավապահ մարմինների գործունեության բարելավմանն ուղղված միջոցառումներ.

գ) հասարակության իրավագիտակցության բարձրացմանը և օրինականության ամրապնդմանն ուղղված միջոցառումներ:

Հանցավորության կանխարգելման պետական ծրագիրը նախատեսվել է 5 տարիների (2008-2012 թթ.) համար և իրագործվել 5 փուլով: Նախատեսված էր ծրագրային միջոցառումների կատարման նկատմամբ հսկողության 3 մակարդակ՝ ներգերատեսչական, միջգերատեսչական և կառավարչական: Ծրագրի փուլերի ավարտին լսվել են միջգերատեսչական հանձնաժողովի ծավալուն հաշվետվությունները: Հանցավորության կանխարգելման պետական ծրագրով նախատեսված են

օրենսդրության կատարելագործմանն ուղղված թվով 25, կազմակերպչական գործունեության կատարելագործմանն ուղղված 28 և հասարակական իրավագիտակցության բարձրացմանն ու օրինականության ամրապնդմանն ուղղված 38 միջոցառումներ:

Ծրագրի կատարման ընթացքի վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանով նախատեսված միջոցառումների գերակշիռ մասն իրագործվել է: Առանձին միջոցառումների կատարումը, համապատասխան հիմնավորումներով, հետաձգվել է. մի մասի կատարումը համարվել է ժամանակավրեպ, առանձին միջոցառումների իրականացումն էլ հետաձգվել է ֆինանսական միջոցների անբավարարության պատճառով: Ինչպես նշեցինք, միջոցառումների կատարման ընթացքի և արդյունքների մասին պարբերաբար ՀՀ կառավարություն են ներկայացվել հաշվետվություններ: Առջևում տարվող աշխատանքների ամփոփման եզրափակիչ տարին է, որի ավարտին կվերլուծվեն ծրագրի իրականացման վերջնական արդյունքները և նախատեսված միջոցառումների իրացմամբ ակնկալվող նպատակներին առնչվող հարցերը, որից հետո միայն կարելի կլինի դատողություններ անել ծրագրի իրականացման արդյունավետության և հետագա անելիքների մասին:

Հանցավորության կանխարգելման պետական ծրագիրը ՀՀ-ում հանցավորության դեմ պայքարը գիտական հիմքերի վրա դնելուն միտված առաջին ռազմավարական փաստաթուղթն է: Այդ փաստաթղթի գործնական իրացումը իրական և շոշափելի արդյունքներ կապահովի հանրապետությունում հանցավորության նախականխման, կանխման, առանձին տարածում ունեցող հանցատեսակների աճի վտանգավոր միտումների չեզոքացման, հանցավոր իրավախախտումների պատճառների և դրանց կատարմանը նպաստող պայմանների բացահայտման ու վերացման, հանցավորության դեմ պայքարի օրենսդրության կատարելագործման, իրավապահ մարմինների պրակտիկ գործունեության հետագա բարելավման ու ռացիոնալացման համար: Կարծում ենք, ծրագրային հիմնական միջոցառումների իրացմանը զուգընթաց, անցած տարիներին հանցավորության շարժընթացում և կառուցվածքում արձանագրված զարգացումների ու միտումների վերլուծության ու գնահատման հիման վրա հնարավոր կլինի վերանայել հանցավորության դեմ պայքարին և դրա կանխարգելմանն ուղղված աշխատանքների մարտավարությունն ու ռազմավարությունը, ինչպես նաև որոշել ծրագրի շարունակականությունն ապահովելու և որոշակի միջոցառումների պլանավորման հարցում նոր շեշտադրումների անհրաժեշտությունը:

Հանցավորության կանխարգելման պետական ծրագիրը լուրջ ներդրում է Հայաստանի Հանրապետությունում հանցավորության կանխարգելման և դրա դեմ պայքարում իրավապահ ու շահագրգիռ այլ պետական մարմինների հաջողությունների ամրագրման, հանցավորության դեմ պայքարի գիտական հիմքերի ամրապնդման և այդ պայքարի հարձակողական բնույթի ապահովման հարցում: Դրա հետ մեկտեղ, այդ ծրագրի գործառնությանը զուգահեռ, հրատապ

նշանակություն է ստանում հանցավորության դեմ պայքարի տեսական հիմքերի հետագա ընդհանրացումը, իրավապահ մարմինների համար գործնական նշանակության նոր գիտական տեսության մշակումը, որն ի զորու կլինի իր կարգավորման առարկայի շրջանակներում ներառել այդ պայքարի կազմակերպմանն ու արդյունավետ վարմանն առնչվող բոլոր հրատապ հիմնախնդիրները:

Այս առնչությամբ հարկ է նկատել, որ այսօր հրապարակի վրա եղած քրեաիրավական բնույթի տեսությունները (քրեական իրավունք, քրեական դատավարություն, քրեագիտություն, քրեաբանություն և այլն) հանցավորության դեմ պայքարի մասնավոր տեսություններ են, քանի որ իրենց կարգավորման առարկայի հարաբերական ինքնուրույնությամբ պայմանավորված՝ ի վիճակի չեն մշակելու այդ պայքարի կազմակերպմանն ու վարմանն առնչվող հիմնահարցերի ողջ շրջանակը: Այդ տեսությունները ինչպես առանձին, այնպես էլ ամբողջությամբ, պրակտիկ գործունեության տեսություններ չեն հանցավորության դեմ պայքար մղող իրավապահ մարմինների համար: Մինչդեռ նշված տեսությունների հատման տիրույթում առկա են հայեցակարգային ամբողջություն կազմող հիմնահարցեր, որոնք կարոտ են հրատապ գիտական մշակման և ամբողջացման: Նման հիմնահարցերի թվին են դասվում հանցավորության դեմ պայքարի հարցերը կարգավորող իրավանորմերի ուսումնասիրությունը, հանրապետության իրավապահ մարմինների պրակտիկ գործունեության կազմակերպմանը, հանցավորության դեմ պայքարի ծրագրավորմանը, մարտավարությանն ու ռազմավարությանը, այդ պայքարի արդյունավետության բարձրացման նպատակով այլ գիտությունների նվաճումների կիրառմանն առնչվող հարցերը: Ակնհայտ է, որ թվարկված հիմնահարցերը ամբողջությամբ ընդգրկված չեն գործող քրեաիրավական տեսություններից և ոչ մեկի առարկայի մեջ: Մյուս կողմից, ակնհայտ է դրանց համակարգված գիտական մշակման անհրաժեշտությունը:

Առաջին հայացքից կարող է տպավորություն ստեղծվել, որ առաջադրվող նոր գիտական տեսության մշակումը ժամանակավրեպ է՝ նկատի ունենալով քրեաբանություն գիտության և համապատասխան իրավական տեսության գոյությունը: Այսօր քրեաբանության առարկան բավական լայն է և ընդգրկում է հանցավորության զարգացման միտումները, հանցագործությունների պատճառներն ու դրանց կատարմանը նպաստող պայմանները, հանցավորության վիկտիմաբանական գործոնները և հանցագործությունների նախականխմանն առնչվող հիմնախնդիրները: Սա ակնհայտ է, սակայն հարկ է նկատի ունենալ, որ ինչպես հանցավորության դեմ պայքարի բոլոր մասնավոր տեսությունները, այնպես էլ քրեաբանությունը չեն տալիս լիարժեք պատկերացում այդ պայքարի բոլոր տեսանկյունների վերաբերյալ, այն հարցերի շրջանակի մասին, որոնք առաջարկվում է ընդգրկել նոր գիտական տեսության կարգավորման առարկայի մեջ: Ակնհայտ է, որ նոր գիտական տեսության մշակումը պայմանավորված է գոյություն ունեցող բոլոր

մասնավոր տեսությունների փոխկապվածությամբ, ինչը օրինաչափորեն հանգեցնում է դրանց բնական ընդհանրացմանը՝ ընդհանուր դրույթների և սկզբունքների հիման վրա: Նման մոտեցումը բխում է մի կողմից հանցավորության դեմ պայքարի մասնավոր տեսությունների անընդմեջ զարգացման շահերից, իսկ մյուս կողմից՝ անմիջական գործնական պահանջմունքներից:

Հանցավորությունը սոցիալական երևույթ է, և դրա դեմ պայքարի անհրաժեշտությունն ակնհայտ է հասարակության բոլոր անդամների համար: Գիտության զարգացման պատմությունը վկայում է, որ նոր գիտական գաղափարների առաջադրումն ու զարգացումը անխզելիորեն կապված են հասարակության մեջ առկա սոցիալապես նշանակալի պահանջմունքների բավարարման հետ: Հանցավորության դեմ պայքարի նոր գիտական տեսության մշակումը ևս պայմանավորված է դրա գոյության օբյեկտիվորեն առկա պահանջով, որը կրում է որոշակի սոցիալական պատվերի բնույթ:

Անվիճելի է, որ կենսունակ են այն գիտական տեսությունները, որոնք բխում են պրակտիկայից և վերադառնում են պրակտիկա[9]՝ հարստացած խոր ընդհանրացումներով և գործնական երաշխավորություններով: Նման գիտական տեսություն դառնալուն է հավակնում նաև հանցավորության դեմ պայքարի առաջադրվող տեսությունը:

ՀՀ քրեական արդարադատության մարմինների առջև կանգնած խնդիրների բարեհաջող լուծումը՝ հանցավորության դեմ արդյունավետ պայքարի կազմակերպումը, մեծապես պայմանավորված է այդ պայքարի նպատակաուղղվածությամբ, դրա գլխավոր ուղղությունների ճիշտ որոշմամբ, հանրապետության իրավապահ մարմինների ուժերի ու հնարավորությունների գրագետ օգտագործմամբ: Այդ համատեքստում հանցավորության դեմ պայքարի նոր գիտական տեսությունը հավակնում է հանդես գալ իբրև փաստական հիմք, որը հնարավորություն կտա հաղթահարելու քրեական արդարադատության մարմինների գերատեսչական անհամախմբվածությունը և հող ստեղծելու նրանց արդյունավետ և օպտիմալ համագործակցության համար:

Նոր գիտական տեսության մշակման պահանջը պայմանավորված է նաև մեր պետության միասնական քրեական քաղաքականությամբ[10], որը հանդես է գալիս իբրև պետական մարմինների քրեաքաղաքական հայեցակարգ և ամրագրված է հանցավորության դեմ պայքարի հիմնական խնդիրները և ընդհանուր սկզբունքները սահմանող հիմնարար օրենսդրական և այլ նորմատիվ ակտերով:

---

[9] *Տե՛ս* **Боков А. В.** *Организация борьбы с преступностью. Под ред. проф. Г. А. Аванесова, М., 2003, с. 8.*

[10] *Տե՛ս* **Бородин С. В.** *Теоретические проблемы советской уголовной политики, М., 1977;* **Злобин Г.А., Келина С. Г., Яковлев А. М.** *Советская уголовная политика: дифференциация ответственности (Советское государство и право, 1977, N 9);* **Владимиров В. А., Ляпунов Ю. И.** *Советская уголовная политика и ее отражение в действующем законодательстве (Учебное пособие, М., 1979);* **Александров А. М.** *Уголовная политика и уголовный процесс в российской государственности, М., 2003.*

Ինքնին հասկանալի է, որ մասնավոր տեսությունները և նոր գիտական տեսությունը չեն մրցակցում. վերջինս հավակնում է մշակել հանցավորության դեմ պայքարի օրինաչափությունների մասին համապարփակ գիտելիքներ և դառնալ պրակտիկ գործունեության տեսություն հանցավորության դեմ պայքար մղող իրավապահ մարմինների համար: Հետևաբար, մասնավոր և միասնական տեսությունները փոխլրացման հարաբերությունների մեջ են և իրենց միասնության մեջ կոչված են ստեղծելու հանցավորության դեմ պայքարի ավարտուն գիտական պատկերը, նպաստելու հանցավորության դեմ պայքար մղող մարմինների աշխատանքի արդյունավետության բարձրացմանը:

Հանցավորության կանխարգելման ծրագրի գործողությունը և դրա դեմ պայքարի նոր գիտական տեսության մշակումը կարևոր փուլ կնշանավորեն Հայաստանի Հանրապետությունում իրավական պետության կառուցման, հանցավորության դեմ պայքարի երկարաժամկետ ռազմավարության մշակման և այդ պայքարի գիտական հիմքերի ամրապնդման ճանապարհին:

ПРОГРАММИРОВАНИЕ БОРЬБЫ С ПРЕСТУПНОСТЬЮ И РАЗРАБОТКА НОВОЙ НАУЧНОЙ ТЕОРИИ

ХАЧАТУРЯН А. М.

Резюме

Государственная программа по предупреждению преступности, утвержденная Постановлением Правительства РА от 27 марта 2008 года, имеет важное значение в организации борьбы с преступностью в республике, пресечении тенденций роста отдельных видов распространенных преступлений, укреплении законности, обеспечении сотрудничества правоохранительных органов в борьбе с преступностью.

Значительная часть предусмотренных этой программой мероприятий осуществлена, в результате возросли как доверие общества к государственным органам, ведущим борьбу с преступностью, так и уровень материально-технической обеспеченности правоохранительных органов и эффективность их работы.

Наряду с программой необходимо разработать новую теорию этой борьбы, поскольку есть множество проблем, являющих собой концептуальную целостность и нуждающихся в теоретическом обобщении. Эти проблемы выходят за рамки криминологии, в силу чего представляется правомерной их разработка в контексте новой теории, создание которой будет важным шагом в деле обеспечения согласованной работы всех органов, ведущих борьбу с преступностью.